

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյալին խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք զիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Տրանկուի հարցը:
Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նա-
մակ թիւքիսից: Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ
ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Խաչապուրի յիշատակա-
րան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԱՍԵԱՆ ՏՐԱՆԶԻՏԻ ՀԱՐՑԸ

Կովկասեան արանդիւր ոչնչացնելու մա-
սին հարցը, «НОВОСТИ» լրագրի խօսքերով,
աւելի և աւելի բարդվում է: Ներկայ ժա-
մանակում պարզվեցան այդ գործի այնպի-
սի մանրամասնութիւնները, որոնց վրա մին-
չե այժմ ուշադրութիւն չէին դարձնում:
Որինակ, 1876 թվին ծագած միտքը Բա-
ղուի մինչև թիֆլիս նոր երկաթուղի անց-
կացնելու մասին գլխավորապէս նրա վրա էր
հիմնվում, որ շուտով երկիրը կը հարա-
սանայ, որովհետև Կովկասեան առևտուրը
շատ կը զարգանայ արանդիւր միջոցով, որ
շատ նշանակաւոր եկամուտ կը տայ դանձա-
րանին բեռներ փոխադրելով: Այդ տեսա-
կետներով էլ շինվեցաւ վերոյիշեալ ճանա-
պարհը վեց տարուց յետոյ: Կովկասեան
արանդիւր ոչնչացնելու մասին այն ժամա-
նակ ոչինչ էր խօսվում: այդ հարցը շատ
յետոյ ծագեց առևտուր առևտրական ֆիր-
մաների գանապան նախագծերի պատճառով,
որոնք ներկայացնում էին իրանց գրութիւն-
ները այդ առարկայի վերաբերութեամբ
ֆինանսների մինիստրութեանը: Ոչնչացնե-
լով Կովկասեան արանդիւրը, կառավարու-
թիւնը եկաւ այն եղանակներով, որ ինքն
շատ մեծ ֆեւաններ պէտք է կրի փողեր չը
կարողանալով ժողովել Բագու-Թիֆլիսեան
երկաթուղուց կիսով աւելի բեռների փո-

խադրութիւնը պակասելու պատճառով:
Այդ բանի վրա կառավարութիւնը մեծ ու-
շադրութիւն է դարձնում հետեւեալ խորհու-
րածութիւնների հիման վրա: Բարձրաստի-
ճան անձինքների մեծամասնութիւնը, որոնք
հրաւիրված են իրանց կարծիքները յայտ-
նելու համար այդ բանի վերաբերութեամբ,
համարում են Կովկասեան արանդիւր ոչն-
չացնելը մասնաւոր բարեգործութեան գործ,
և ոչ թէ ժողովուրդը հարստացնելու արն-
տեսական սկզբունք, առհասարակ և կով-
կասեան երկրի համար մասնաւորապէս:
Ռուսաց մանուֆակտուրայի արդիւնաբերու-
թիւնների վաճառման նուազելը պարսկա-
կան վաճառանոցների վրա, չէ կարող, այդ
անձինքների կարծիքով, բանւորների ճշիւ-
թամի պատճառ դառնալ Ռուսաստանում:
Ռուսաստանը աւելի երկրագործական եր-
կիր է, և նրա մէջ դեռ եւս առանձնապէս
բանւոր դաս չը կայ: Այդ մանուֆակտու-
րային արդիւնաբերութիւնը կը պակասի,
մեր գործարանականները կարող են իրանց
զիւղերը փերադառնալ և երկրագործու-
թեամբ պարապել: Յետոյ ասում են այդ
անձինքը, արանդիւր ոչնչացնելով, կովկա-
սեան երկիրը շատ կաղքատանայ և նրա
անտեսական դրութիւնը մինչև minimum
կընկնի: Ի նկատի առնելով վերոյիշեալ-
ները, կառավարութիւնը հոգում է այժմ
Կովկասեան արանդիւր ոչնչացնելուց առա-
ջացած իր ֆեւանները փոխադրել առևտուր
առևտրական արդիւնաբերութեան այլ աղ-
բիւնների հաշիւ վրա Միջին-Ասիայում: Դրա
համար հնարաւոր են համարում թողնել
Կովկասեան արանդիւր համեմատաբար փոք-
րիկ մաքսահարկ վերցնելով օտար ապրանք-
ներին:

զիտէր, թէ նա մի ժամանակ ձգնաւոր է եղել,
թէ Աստուծոն նուիրված մարդիկ միշտ պատ-
րաստ են օգնել, բարիք գործել, երբ տեսնում են
թշուառութիւն, երբ տեսնում են կարօտութիւն:

«Բայց ես տակաւին տարակուսութեան մէջ եմ
գտնվում, իմ կասկածը բոլորովին փարատված
չէր, թէ արդեօք դա մի և նոյն անձնաւորութիւնն
էր, որին իբրեւ ձգնաւոր մի ժամանակ տեսել էի
Ուրտանայ վանքում, թէ ես սխալվում էի չափա-
զանց ձիւշտ նմանութիւնների մէջ:
«Բաւական տեղ մեզ ճանապարհ դնելուց յետոյ,
երբ կամենում էր նա բաժանվել մեզանից, ես
հարցրի.

—«Մենք չի պիտի գիտենանք, թէ ումից պէտք
է չնորակաւ լինենք այսքան բարութիւնների
համար:

«Նա ստուտութեամբ պատասխանեց.

—«Կարեւոր, մի առանձին հարկաւորութիւն չը
կայ այդ գիտնալու:

—«Այստեղ միայն, ինձ շատ ցանկալի էր
գիտենալ, թէ դուք ով էք:

—«Եթէ այդ ձեզ որ ե իցէ օգուտ կը բերէր,
ես կասէի ձեզ:

«Նա ուղիւ նայեցի նրա երեսին, ասելով.

—«Եթէ իմ յիշողութիւնը ինձ չէ խաբում,
կարծեմ, ես տեսել եմ ձեզ մի ժամանակ մի վան-
քում... մի քարանձաւի մէջ... դուք ձգնաւոր էիք...
«Նրան տիրեց մի վայրկեանական խռովութիւն,
բայց իսկոյն ծածկելով իր չփոթիւթիւնը, պա-
տասխանեց.

—«Կոք չէք սխալվում... այն ժամանակ ձեզ
էիք, քան թէ ես...»

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք պ. Արթուր Լէյստից, որ Վոլինիայի
Միգոզ քաղաքում է ապրում և աշխատում է
Լէյստիցի «Magazin» շաբաթականում, մի տեղ-
ված յօդուած գերմաներէն լեզուով Սոնդուկեան-
ցի թատրոնական պիէսների նշանակութեան
վրա: Կաշխատենք մի այլ անգամ ծանօթացնել
մեր ընթերցողներին այդ յօդուածի հետ:

Ստացանք Կ. Պոլսի մեր թղթակից Հայկակից
մի թղթակցութիւն Երզրումի անցքերի մասին,
որ այս անգամ չենք տպում յօդուածի ընդարձա-
կութեան պատճառով: Հետեւեալ համարներում
կը տպագրենք այդ յօդուածը:

Ստացանք Մեծ-Վարաքիսից, պ. Բագրատ
Նալբանդեանցից 3 ռուբլ յօդուած վանի կենտրոնա-
կան վարժարանի:

Այս օրերս թիֆլիսից ուղևորվեց Պետերբուրգ
Բագու-Թիֆլիսեան երկաթուղին քննող պետական
մասնաժողովը, որը ապրիլի 2-ից սկսել էր իր
քննողական աշխատանքը: Մասնաժողովը իր
քննութիւնների մէջ ոչինչ պակասութիւն կամ
վտանգ չէ նկատել: Բագու-Թիֆլիսեան երկաթու-
ղու առաջին փոքր ճակատի գնացքը կատար-
վեց ապրիլի 21-ին, իսկ կանոնաւոր գնացքը բա-
ցումն թէ ճանապարհորդների և թէ ապրանքների
համար տեղի ունեցաւ մայիսի 7-ին: Թիֆլիսից
Բագու երկաթուղին գնում է գիշերուայ 1 ժամին
և 1 ժամին, իսկ Բագուից Թիֆլիս դուրս է գալիս
առաւօտեան 9 ժամին և 13 ժամին: Բագու-
ից Թիֆլիս հասնում է ցերեկվայ 8 ժամին և 46
րոպէին, իսկ Թիֆլիսից Բագու հասնում է գի-
շերվայ 11 ժամին և 58 րոպէին: Գնելի մասին
պէտք է նկատել որ շատ թանկ են նշանակված:
Օրինակ Թիֆլիսից Բագու գնալու համար եր-
բօր կարգի վաճառում նշանակված է վարձ—
30 ռ. միթէ սա մատչելի է հասարակ դասին:
Բագու-Թիֆլիսեան երկաթուղու բացվելու լուրը
զեռ բացումից առաջ վայր զցեց զգալի կերպով
նաւթի գինը Թիֆլիսում 2 ռուբլուց պակաս 80 կո-
պեկի:

նում էի մի լեռան քարանձաւի մէջ, հեռացած
մարդիկներից... իսկ այժմ ձգնաւոր եմ կիսաբի-
մէջ...

«Այս ասելով նա տուեց ինձ իր քսակը,—
«Այ, ասաց, ճանապարհին ձեզ պէտք կը լինի,
և իսկոյն բաժանվեցաւ մեզանից:

«Նա ապշած մնացի, մի խօսք անգամ չը գտայ
նրան ասելու, միայն քաղաքացի պէս կանգնած,
նայում էի նրա ետեւից: Նա էլ ճանապարհորդ էր,
նա էլ մի տեղ էր գնում, բայց ուր էր գնում,—
Աստուած գիտէ: Նա իր քսակը տուեց ինձ, ես
հաւատացած էի, որ դա նրա վերջին արձաթիւնն էր:
Իսկ ինքը գնում էր միայնակ, ոտքով, մի երկայն
ցուպ ձեռքին բռնած, աղքատ ուղևորի պարկը
ուսին կապած:

Երբ առաջակապտը վերջացրեց, հարցրի նրա-
նից.

—«Այնուհետեւ միւսանգամ չը հանդիպեցիք նը-
րան:

—«Ոչ: Այնօրից անցել են շատ տարիներ, կըր-
կին հանդիպեցի նրան միայն այստեղ, քեզ հետ
միասին, մուրացկանի կերպարանքով, և այդ խիստ
զարմացում է ինձ: Այդ մարդը մի տեսակ հա-
նելու է ինձ համար: Նա շատ կը ցանկանայի,
որ մէկ անգամ ես տեսնէի և խօսէի նրա հետ:
մարդը երեսը ինձ, որպէս էր առաջ: Գու տեսար,
ինչպէս կարեկցութեամբ մտնեցաւ նա դատաւար-
անների խումբին, ինչպէս բաժանեց մեզ իր
հաւաքած գրօնները, ասելով. «դուք աւելի թշուա-
ռեք, քան թէ ես...»

Թիֆլիսում ձիաքաշ երկաթուղի անցկացնելու
հարկաւոր աշխատանքները դադարեցրած են. միայն
ձիաքաշ երկաթուղին ներկայումս բանում է վօրօն-
ցովի արձանից մինչև Մուշայիլը և երկաթուղու
կայարանը: Իսկապէս այս ճանապարհի վրա նա
օգուտ կարող է բերել միայն այն հասարակ դասի
մարդկանց, որոնք դրժով ճանապարհ են ընկնում
երկաթուղու կայարանը: Տարաբաղաբար ձիաքաշ
երկաթուղին այս կարևոր նպատակին էլ չէ ծա-
ռայում: Այսպէս օր. առաւօտեան երկաթուղու
գնացքին նա չէ բանում, իսկ գիշերը երբ երկա-
թուղին Փօթի-Թիֆլիսեան գնացքով հասնում է
Թիֆլիսի կայարանը ժամը 9 1/2-ին, կայարանի
մօտ կանգնած են լինում սովորաբար 3 կամ 4
վագօն, այն ինչ նստողների թիւը պահանջում է
մինչև 10 վագօն: Եւ այսպէս բազմաթիւ եկաւոր-
ներ, մանաւանդ հատարակ դասից, ժամերով սպա-
սում են, որ իրանք 5 կոպեկով պէտք է քաղաք
հասնեն, բայց իրոք և ստիպված են բեռը
շաւկին կամ ոտով հանել քաղաք և կամ
կառքերին կառապանների ցանկացած գները վճա-
րել: Միթէ ձիաքաշ երկաթուղին դատարկաւորվի-
ների համար է սարքված, որոնք 5 կոպ. ունե-
ցած ժամանակ, վաղում են Մուշայիլը և անգոր-
ծութեամբ անցկացնում իրանց ժամանակը:

Լուսաւորութեան նախարարութիւնը որոշեց,
որ այսուհետեւ ուսուցչական ժողովները պէտք է
ունենան պաշտօնական ձև և սրա մէջ յայտնված
մտքերը և կարծիքները պէտք է ներկայացվեն
նախարարութեան հայեցողութեան և կշռադա-
տութեան:

Ինչպէս յայտնի է տրանդիւր հարցը մտադիւր
էին յետաձգել մինչև աշունը, բայց անցկացնելի
հանգամանքներից այդ խնդրի վճիռը կայացաւ
ապրիլի 25-ին պետական խորհրդում: Ներկայ գը-
տնվող քննողներից 17-ը այն կարծիք էին, որ
պէտք է բոլորովին ոչնչացնել արանդիւրը, իսկ
24-ը իրանց ձայնը տուեցին այժման դրութիւնը
պահպանելու: Այսինքն ապառ տրանդիւր ճանա-
պարհ Կովկասի վրայով այն օտար ապրանքների
համար, որոնք ուղարկվում են Պարսկաստանի և
Միջին-Ասիայի այլ և այլ վաճառանոցները:

Նա դարձեալ գաղտնիք պահեցի խորհրդաւոր
մուրացկանի մասին, այսքանը միայն ասելով իմ
լաւ ընկերին.

—Գուցէ, միւսանգամ կը տեսնենք... այդ մար-
դը շուտով չի հեռանալ այստեղից...

Նա հաւատում էի, բոլորը հաւատում էի, ինչ
որ պատմում էր առաջակապտը: Գաւոր Պետրո-
սը այն տեսակ առաջակապտի արարածներից էր,
որ ընդունակ էր հրեշտակից սատանայ լինել,
իսկ սատանայից հրեշտակ: Թէ բարին և թէ չարը
նրա մէջ մի և նոյն ուժով էին դրժում: Միայն
հանգամանքներից էր կախված, թէ երբ կամ ինչ
զեպքերում պէտք էր որը գործ գնէր: Նա աշ-
խարհի մարդ էր, գիտէր, թէ ինչպէս պէտք էր
վարվել աշխարհի հետ: Նա ինքս վկայ էի եղել
շատ գործերի, որոնց մէջ նա ցոյց էր տուել թէ
իր վերին ատրիճանի ստաբիլութիւնը: Նա տեսել
էի նրան բարեխիտ որպէս աղանի, և նմանաւոր
որպէս օձ: Այդ մարդը, որի հետ տարիներով ապ-
րել էի, գործել էի, ինձ համար եւ մնացել էր որ-
պէս մի մթին հանդուր: Նա հասկանալ չէի կա-
րողանում, թէ ինչպէս չարս ու բարին, առանց
միմեանց հետ հակադրելու, հաշտվում էին նրա
մէջ: Բայց հաւատացած էի, որ նա ամենայն ան-
կեղծութեամբ, ամեն տեսակ զոհաբերութիւններ
յանձն առնելով, եկել էր ինձ ապրտելու իմ թը-
շուառ դրութիւնից: Բայց ես կարող էի կրկին
անձնատուր լինել մի մարդու, որը որքան բարի
էր, նոյնքան եւ չար էր: Այդ հարցը դարձեալ
մնաց իմ սրտում անվճիռ...

Անցեալ ապրիլի 14-ին թիֆլիս հասաւ Լուի Զիլիպի թուրք Զարտիան զուրք: Դեռ մի քանի օր շարունակ բազմաթիւ հետաքրքրողներ գնում էին երկաթուղու կայարանը տեսնել զուրքի գալուստը: Նրան զմեռաբեց տեղիս ոտակաւապետը: Հանապարհորդութիւնը պաշտօնական ձև չունէր: Գուրբը շատ հետաքրքրուում է տեսնել Կովկասը և այդ նպատակով ուղևորութիւն է առնում: Մի քանի օր մնալուց յետոյ Կովկասեան կառավարչապետը յարգելով զուրքի անձնաւորութիւնը, տուեց յատուկ ուղեկից, որի առաջնորդութեամբ ճանապարհ ընկաւ զուրքը տեսնելու Կովկասեան նշանաւոր յիշատակարանները: Գուրբը մի քարձրահատակ մարդ է, չէի մօրուսով, կապոյտ աչքերով: Նրա համար բոլոր Լրագիրները համակրական դրօշակներ են տարւում: Գուրբը մտադիր է ճանապարհորդել նոյնպէս Միջին-Ասիա, Հնդկ-կաստան և այլն:

Թիֆլիսից 10 վերստ հեռավորութեամբ դէպի հարաւ գտնուում է Սօնգուլուի իր բազմաթիւ այգիներով: Այգուղի դեռ երկամիջակաւապետ Ներսէսի կենդանութեամբ իշխէ: Ամբիւսկարի նուիրեց Ներսիսեան զորոյն մի փառաւոր այգի արժողութեամբ մինչև 5,000 ռ: Այդ այգին իր ժամանակ ընտրւում էր արդիւնք դարձնելով 600 ռուբլ: Կարեւոր է ներկայումս այդ այգին անհոգութեան շնորհիւ քարուքանդ դրութեան մէջ է: Քարէ տան շինութեան առատաւոր փուլ է, դռներ չը կան, այգիի շափարը քանդուած է, ջրահան մեքենան, որ մինչև 200 ռուբլ արժէ կտրուած վայր է ընկած, հարկաւոր որովք պահպանող ձողերը յախչուած են և այդպէս Սօնգուլուի գետեղիւայ ամենաբնակարանային ունիւնը զուրկուած է: Այս առաջին անգամ չէ, որ «Մշակ» մէջ լսուում է իրաւացի գանգաւորներ Ներսիսի զորոյն պատկանեալ կալուածների և արդիւնքների անհոգութեան մասնակցութեամբ Կարեւորութեամբ: Պէտք է խնայել, վերջապէս, որ Ներսիսի զորոյն իր հոգաբարձուների մէջ ունի մի քանի անձինք, որոնք տասնեակ տարիներով զանազան ճանապարհներով ընտրուելով անփութիւն հոգաբարձուի պաշտօնի մէջ յատկապէս իրանց անձնական նպատակների և հաշիւների համար, նորերին էլ միշտ հաւատացնում են, որ դպրոցի գործերը օրինակելի դրութեան մէջ են— все благополучно: Բայց հասարակութեան բանիմաց դասին փաստերից շատ լաւ յայտնի է թէ ինչ չինական անշարժութեանն է դատաւարութեամբ զարոյցը թէ ուսումնական և թէ տնտեսական կողմից: Այդ ջերմեանը հոգաբարձուները շատ վաղ են դասել իրանց զարոյցի անմահ բարեբանների ցուցակում...

Մայիսի 3-ին մէկ զինուորական Կենտրոնական հիւրանոցում, Վօրոնցովի արձանի մօտ ատրի-ճանակով սպանեց ընկալական ուսումնարանի ու-

Գ.
ԶՈՐԴՈՐԳ ԳԻՇԵՐ

—Գու այն պատմի, թէ ինչու են կոչում քեզ աւագակապտի և որպէս ընկար դատաւարտեալների հասարակութեան մէջ, հարցրի եւ չորրորդ գիշերը, երբ բաւական հանգստացել էինք ցերեկվայ ծանր աշխատութիւնից:

Աւագակապտը շարունակեց.
«Մեր անձնաթիւ բարեբարի վարձած ձիաներով անցանք Մեղրիի գետաւոր: Այստեղ ճանապարհները այն աստիճան քարքարոտ են և լեռնային երկնքները այն աստիճան սարսափելի են, որ անկարելի է ձիով ման գալ: Մենք ստիպուած էինք մեր ձիաները փոխել և վարձել ջորիներ: Այդ խորամանկ անասունները սովոր են լեռնային քարքարոտներում ման գալ:

«Այդպէս Մանամը դժուարութեամբ յօժարկեցաւ ջորիի վրա նստել: Ղարազաղի մէջիքի աղջիկը, որ սովորած էր սիգապանն նմոյնների, կարծես, ամաչում էր, որ ստոր անասունների վրա հեծած տեսնէին նրան: Դեռ այլ եւ ուր է ճանաչուում... ասաց նա, և մի առանձին մտերմութեամբ իրենց ինձանից օգնել իրան, որ հեծնէ: Եւ դարձաւ, Սանամը, որ ծովի մոտ ձիաների վրա թռչելի գիտէր, ինձանից օգնութիւն էր խնդրում: Նրբ փոքր ինչ առաջ գնացինք, ասաց նա.

—«Վերջին ժամանակներում շատ ուժեղացել է հալալ...

Նրա ձայնի մէջ լսուում էր խորին տխրութիւն և սրտի դանդաղ կտրուած:

սուղիւ պ. Մաշարկուն: Պատճառը ուղանութեան մի հասարակ վիճարկութիւն է եղել «Իտալիա» ալբոմ, որը զինուորականը ընդունել է վիրաւորանք իրան համար: Հետեւեալ օրը Մաշարկուն, հիւրանոցը՝ ներդրութիւն խնդրեալ, և ահա անգէնը մարդուն զինուորականը քաջութիւն է համարում սպանել: Մարդասպանը կալանաւորուած է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՔԻՍԻՅ

Կ. Պօլիս, 27 ապրիլ

Կարեւոր բան մը չը կայ ըսելիք այն ընդունելութեան մասին զոր սուլթանը ըրաւ մեր Պատրիարքին: Ներսէս սրբազան շնորհալուութիւն յայտնած է այն տանը համար զոր սուլթանը Պատրիարքին նուիրեց: Սուլթանը շատ համակրական խօսք է: Պատրիարքը նա միւսի աղօթքները ըրած է, այսինքն իր բարեմաղթութիւնները շարականի եղանակաւ երկնայնեայ: Այս կերպ աղօթելը շատ հաճախ է թերթերուն և Ներսէս սրբազան Պօղոս Պատրիարքին ստիպած էր: Սկզբունք կը արուել, նոյն օրը պալատին մէջ, ի ներկայութեան առաջին սենեկապետի և նախարարաց ի պատիւ Պատրիարքի: Այս անգամ Պատրիարքը ոչ մի եկեղեցական ընկեր առած էր իրեն, միայն Սիմոն պէյ միասին էր:—Այս տեսակ ընդունելութիւններն հոս միշտ սրտազուրկ կը պատճառեն: Կը լսենք թէ, ստոյգ ըլլալը չէ՛ր երաշխատուել, անստորագրել նամակներ խրկուած են Պատրիարքին որ կամ հրաժարականը տայ, կամ ձշուռ տեղեկութիւն հաղորդէ լորդ Տրֆորէնի հարցումներին:—Լորդ Տրֆորէն հասաւ հոս, այսօր կամ վաղը սուլթանին կը ներկայանայ. այնուհետ անհանդիմ կը սպասենք թէ ինչ պիտի ըլլայ հայկական հարցի համար բանակցութիւնը: Արդէն այսօր ալ հրատարակեցին թէ պ. Պրայս Անգլիոյ խորհրդարանին մէջ մօտ օրերս հարցում պիտի ընէ բարեկրթութեան խնդրոյն համար: Ռուսիոյ դեսպանն ալ երէկ երկար և առանձնակի տեսակցութիւն մը ունեցաւ Պատրիարքի հետ:—Գետական Պատրիարքարան եկած էր: Մեր կողմէն ինչ ընթացք պիտի բռնուի բարեկրթութեան խնդրոյն համար որոշ չը գիտցուի: Կարծիքները կը տարբերին: Ամենու աչքը Պատրիարքին վրայ է. դեռ անոր ձեռքին է: Հայերէն լրագիրներուն մէջ, ինչպէս ընական է, ոչինչ կայ: Եթէ կարենանք քիչ մը կը դրենք ուրիշ աստիճանական կարծիքներուն վրայ:

Արատուց, բայց ստոյգ, տեղեկութիւններ կը հասնեն Կարինի բանտարկելոց դատաւարանին վրայ: Այսօր «Սթամպուլ» կրկին թղթակցութիւն կը հրատարակէ: Թիւրքերը ինչ որ մէկ ձեռքով

—Կուր այս առաւօտ ոչինչ չը կերպը, ասեցի նրան,—կարելի է քաջաճառութիւնից լինի:

—Ոչ... պատասխանեց նա:—Շատ անգամ, Սուրբ Սարգիսի պատին, երկու կամ երեք օր ծով էի պահում, ոչինչ չէի ուսումը, բայց երբեք ուժեղութիւն չէի լինում:

—Ներքի, գետը ձեզ վրա վատ տպաւորութիւն գործեց... նկատեցի ես:

—Ոչ: Այն մարդը շատ վրահասաւ, եւ դեռ բոլորովին ջրի տակը չէի գտնել, որ աղատեց ինձ: Այն, երանի թէ գիտեմալի ու էր այդ մարդը: Երեւում է, որ Աստուած մեզ հետ է: Նա ուղարկեց այդ մարդուն մեզ օգնելու համար:

«Վերջին խօսքերը միտքարում էին նրան և ասելի ամբողջութեամբ էին նրա հաւատը, որը խիստ վատ էր օրիորդի մէջ:

«Չը նայելով որ ջորիները դանդաղ էին ընթանում, դարձեալ մենք այն օր անցանք բաւական ճանապարհ: Գնալով լեռների մէջով, շատ անգամ ստիպուած էինք անցնել այնպիսի վտանգաւոր տեղերով, որ անձնավտանգ օրորոյնները միայն ոտք են կոխում, այն եւ խիստ հալիւ անգամ: Զատիվայրների դժուարութիւնները երբեմն տուրպիցում էին մեզ ցած իջնել ջորիներից, և պալատաժների վրայով մազցելով, առաջ գնալ: Մանամը բոլորովին յօգնած էր, հաղիւ-հաղ կարողանում էր իրան ոտքերի վրա պահել: Եւ մի քանի անգամ առաջարկեց ընկել նրա ձեռքից, ուր նա նրան, բայց ամեն անգամ մերժում ստացաւ: Նա դեռ խորշում էր ինձանից, նա այնքան հեղաւոր էր, որ դեռ նայում էր իմ վրա, որպէս իր

կուտան միւս ձեռքով կանոնէր. այս արուստին մէջ վարժ էր:—Ամբաստանաւորներուն երեք փառաւորան յատկացուցեր էր դատարանը, ասացիք երկուքը հայ են, սակայն արդեւեալ է ամբաստանաւորներուն հայերէն խօսիլ իրենց փառաւորանին հետ: Ինչ երկուք ունի կառավարութիւնը որ թույլ չը տար իր ձեռքովը գտնուած խեղճ հայոց աղատութիւն տեսակցել իրենց փառաւորաններուն հետ: Ուր տեսնուած է ասիկայ: Ամբաստանաւորները երեք խումբի բաժնուած են, երկու խումբին փառաւորանները հայ են, մէկինը թիւրք: Փառաւորանները չեն կրնար աղատ տեսակցել իրենց պաշտօնականութեան յանձնուած ամբաստանաւորներուն հետ: Պէտք է որ գանազան պաշտօնականներ ներկայ գտնուին տեսակցութեան: Ահա ինչ կայ. մի՞թէ ամբաստանաւորներն ալ երկու օր միջոց տուած են փառաւորաններուն, քննել, կարգաւ դանոնը, և պատասխան պատրաստել: Ինչպէս հար է երկու օրուան մէջ ընկել: Ասիկա դատայդ գրեւորն մէկ օրինակը միայն կայ և երեք փառաւորանները այդ մէկ գրին վրայ գլուխներ պիտի հոգնեցնեն: Ուրիշ օրինակ տալու համար ծախք կը պահանջեն մօտ 3 կամ 4,000 ռուբլ: Այդ խեղճ մարդերը ուսկից երեք չորս հազար ռուբլի ծախեն: Փառաւորանները այդ ամբաստանաւորները և Ամբաստանութեանց ատենին վճարաւոր օրինաց համեմատ պալատաւոր գտնելով բոլորքաղի մը դրած են և ամբաստանաւորներուն ստորագրել տուած են: Այդ բոլորով ամբաստանաւորները առջի վճիռներուն ջնջումը կը պահանջեն իր անոնք ապօրէն եղած:—Մուսթաֆա Զօթֆօր բաշա ինքզինքնին արտաքու կարգի ներդրութիւն կուտայ որ այս մարդերը դատաւար տեղ տայ, ասով կը յուսայ դուցէ Ստարազում ըլլալու:—

Յակոբ անուն կաշնեցի հայ մը որ անցեալները աղատ ձեռքին հոս բանալն, կը լսենք թէ այս օրերս բռնել և պահապաններով Կարին խրկել են:—Այս անձը ամբաստանաւոր էր թէ յեղափոխականաց գործակաւորն է հոս:

Կը խօսուի նաեւ թէ Պատրիարքը նախարարաց հետ տեսնուելով իր թէ խոստում առած ըլլայ որ եթէ դատաւարութիւն Կարինի հայերը սուլթանը ընդհանուր ներդրութիւն չնորէ:

Վանի կառավարիչ հասան բաշան ալ հոս կը սպասուի: Պիտի գայ անձամբ տեղեկութիւն տալ Վանի հայոց գործոց վիճակին վրայ: Տիտուր լուր Վանի մասին:—Խրիմեան սրբազան այլ եւ չէ Վանի առաջնորդ Ազգ. վարչութիւնը երկը ընդունեցաւ սրբազանին հրաժարականը: Ազգին վանեցիները:—Վան օրուն համար ամեն հայ ջերմեանով կաշնաւոր, Վան օր դրեթէ մուցնել տուաւ Հայաստանի միւս մասերը, այսօր այդ հայոց սիրոյ մէջ առանձնաշնորհաւ քաղա-

հօր տան ծառաներից մէկի վրա: Եւ դեռ նրա մտերմ, անձնաւոր բարեկամը չէի:

«Նրբ բարձրացանք սարերի վրա, արեւ արդէն սկսել էր թեքել: Գէպի իր երկրեան մուտքը: Ստորոտներում տօթը խեղդում էր, իսկ այստեղ ցուրտը մրսեցնելու չափ զգալի էր: Զօրիներից ցած իջանք, նստեցինք վաղը ինչ հանգստանալու: Եւ առաջարկեցի օրիորդին փաթկալի իմ վերարկուի մէջ. նա յօժարութեամբ ընդունեց, որով հետե վերարկու չէր առած իր հետ: Յետոյ տուեցի նրան մի բան ուսելու. նա բոլորովին կաղ-գուրկեցաւ և գտնուում էր բաւական խաղաղ տրամադրութեան մէջ:

«Արեւ մտաւ: Երեկոյան վերջապէս հեղհեղտէ գրկում էր իր պարզ-ժիրանի շառաւիղներից: Սարերի գագաթները պտտած էին սպիտակ-ձիւ-նալայլ մշուշով, որը միախառնուելով երկրի կապտաւարկութեան հետ, ներկայացնում էր անասնման մանրակազմային ուղիւստ, որի մէջ լեռների ալիքաւոր բարձրութիւնները ձեւացնում էին սքանչելի տեսարան: Օրիորդը ընտելեան սիրող էր: Եւ նկատեցի՝ նոյն ժաման յախչուած էր նա խորին հիւսկանքով և նրա խոշոր աչքերը մի առանձին ուղեւորութեամբ նայում էին դէպի գեղեցիկ լեռնային տարածութիւնը: Եւ նստած էի նրա մօտ. նա դարձաւ ինձ այս խօսքերով.

—«Նայել այն նեղ ճովանդի, որ հաղիւ երեւում է թափանցիկ մաւաւորով միջոց. նայել այն բաց-կանաչադարձ խոտերին, որ պատել են նրա սիրուն տափարակը. տես այն վտակը, ինչպէս շտապով վազում է դէպի ձորը. ականջ դիր,

քը ցոյց կուտայ ամբողջ հայ աշխարհին առանման ապերախութեան օրինակ մը և կը մնայ մէ իր ծոցին խրիմեանը: Ինչ ճգնաժամի մէջ գտնուի Հայաստանը, և ինչ կընեն Հայաստանցիները:

Խրիմեան սրբազանի համար ալ կը խօսուի քանզում մը Պօլիս պիտի այցելէ, բայց մենք ուղեր հաւատալ:

Հիմա վիճակնիս կը տեսնվի, որ որ քիչ չաւանանաւոր առաջնորդ մը կայ զայն կառավարութիւնը Պօլիս բերել կուտայ, երկիրը լայն վրանաւ ձգելու համար: Իսկ ու որ կառավարութիւնը չը կրնար Պօլիս բերել տալ այն տեղացիները իրենք կը վճարեն, ինչպէս իրենք մեան սրբազանի համար: Ուր էր թէ կառավարութեան բռնաբարութեան ներքե Պօլիս գրեթէ այս նախատիւնը չէր ծանրանար Վանի վրայ: Ամեն կողմ նոյն է հայոց դարձը, անձնական նիւստում օտքի տակ առնել կուտայ հասարակութեան շահը:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կուր ինչից հեռադրում են մայիսի 5-ին, որ իրանական աղգային միութեան ժողովը, զինքն լով պապի կնիքով, որով խորհուրդ է տալիս որ զարմաւորութեամբ հպատակիլ օրէնքներին, վանք լսել պապին կրօնի գործերում, իսկ քաղաքացի գործերի գլուխ համարել Պարսէլին, օրին և այլն է հետեւ մինչև խրախուսի ինքնավարութեան հասնելու:

—Վիէնայից հեռադրում են հետեւալով: Ստեղ հասաւ Զինոգորիայի իշխանը, որը Մոսկու է ուղևորուած:

—Բերլինից հեռադրում են, մայիսի 5-ին տեսալ: Այստեղ ընդհանուր ուղադրութեան ուղարկայ դարձաւ դրամանական կայսրի և իշխան Բիսմարկի սիրալի վարմունքը Վաղդիսթոյի հետ: Այստեղ ժամանեց կոմսուհի Դուվալիս, որը փարիզ է գնում այցելելու իր ամուսնու օրը հիւանդացի է թողնել բոլորքումից:

—Փարիզից հեռադրում են, որ կոմս Դուվալիս աւելի լաւ է դրում իրան, թէպէտ և վտանգէ անցել:

—Փարիզի պատգամաւորների ժողովը քույր կուլեան ենթարկեց ծախսերը Տօնիկին արշաւանքի համար:

—Պէշտից հեռադրում են հետեւալով: Այստեղ հայթիւնները խօսք կապեցին բոլոր բարձրակարգ անդամները իրան իրանց իրանց իրանց:

—Նիւ-Եօրկից հեռադրում են, որ Զիլիք և Պիտի մէջ հաշտութիւն կայացաւ:

—Լոնդոնից հեռադրում են մայիսի 6-ին, որ Ֆլորիս-Պարիզի մէջ կատարած սպանութիւնը:

ճրքան քաղցր լսում է նրա ձայնը: Այն, որը գեղեցիկ է արդ բոլորը: Այնտեղ երեւում են միւսների տաղաւարներ: Տես, ոչխարները վաղը դառնում են արօտից. եւ լսում եմ նրանց ձայնը: Ահա խմբեցան նրանք տաղաւարների շուրջ: Ահիկները դուրս եկան կիկելու նրանց. փոքրիկ հետ, թէ ինչու են խլում իրանց անուշոր: Բայց նրանց մայրերը այնքան առատ են, որ բաւականութեամբ են տալիս թէ իրանց տեղերին և ինչ իրանց ձայներին: Գնանք այդ հովիտների մօտ վայրերը նրանց հիւրանքութիւնը:

«Հովիտը, որ այնքան ուղեւորութեամբ ներգրւում էր օրիորդը, շատ հեռու էր մեր տեղից: Երեկոյան միտքութիւնը սկսել էր լսել իրանց: Դարձեալ մեր ճանապարհորդութիւնը չէինք կարող, որովհետեւ թէ մենք և թէ մեր անասունները ստատիկ յօգնած էինք: Պէտք էր մի օրեկան գիշերանք համար: Բայց նախ քան այդ հովիտների մօտ հիւրանքութիւն ինքուրքը հարկաւոր էր տեղեկանալ, թէ նրանք ինչ տեսակ մարդիկ են: Այդ մտքով եւ մօտեցայ մեր ջորի պանին, որ մեղանից փոքր ինչ հեռու արածուցում էր իր անասունները:

«Ջորապանի առած տեղեկութիւնները հովիտների մասին խիստ նպաստաւոր էին: Այդ խոշոր նարանները եկած էին Ղափանի կողմերից, աղջիկ հայ էին և յայտնի էին իրանց քաջութեամբ: Աստեղ ժամանակաւորապէս զետեղվել էին նրանք ամառը անցկացնելու և իրանց անասունները բաժանելու համար: Վերջացնելով իր խօսքերը:

